community

The New Apostolic Church around the world

01/2022/AM

2022 թվականի նշանաբանը՝

Միասին՝ Քրիստոսով

Խմբագրական
Միասին՝ Քրիստոսով

Ժամերգություն
Ինչպես է Աստված քեզնով հետաքրքրվում

Եկեղեցական վարդապետություն
Եկեղեցին ,, այո,, է ասում կյանքին

New Apostolic Church
International

Խմբագրական

3 Միասին՝ Քրիստոսով

Ժամերգություն

4 Ինչպես է Աստված քեզնով հետաքրքրվում

Մանկական անկյուն

10 Հակոբը խորամանկությամբ ստանում է անդրանիկության օրհնանքը

12 Այցելություն Վերային՝ Սինգապուրում

Տեսություն

14 Եկեղեցին ,, այո,, է ասում կյանքին

Ընդհանուր լուրեր

18 Միասնությունը ճանապարհն ու նպատակն է

Տիտղոսաթերթի լուսանկարը՝ Քեվին Սարգանթի
Շապիկի ետևի լուսանկարը՝ ՆԱԵ Զամբիա

Միասին՝ Քրիստոսով

Լուսանկարը՝ Միջազգային առաքելական եկեղեցի

Սիրելի հավատացյալ քույր-եղբայրներ,

ինչ էլ նոր տարին մեզ համար պատրաստած լինի, մենք հավատով կենտրոնանալու ենք Տիրոջ օրվա վրա:

Մենք վստահ հավատում ենք՝ Քրիստոսը գալու է, որպեսզի իր հասրնացուական համայնքին իր հետ տանի: Դրա համար էլ 2022-ի տարվա նշանաբանը այսպես է հնչում՝ ,, Միասին՝ Քրիստոսով,,:

,,Միասին,, հասկացության ներքո ես չորս հարթություն եմ տեսնում՝

- միասնություն Երրորդություն Աստծո հետ
- միասնություն ժամերգության ժամանակ
- միասնական կյանք համայնքում
- ողջերի և մահացածների միասնություն

Ի՞նչ է նշանակում՝ միասնություն Երրորդություն Աստծո հետ: Աստվածային կյանքը կյանքն է համայնքում: Երրորդություն Աստված մեկ Աստված է՝ Հոր, Որդու և Սուրբ Հոգու միասնությամբ: Եվ այս Աստվածը մարդուն իր հետ միասնության է կանչում: Ով աստվածային կյանք է կրում, նա ցանկանում է միասին լինել Աստծո և յուրայինների հետ:

Մենք այս միասնությունը զգում ենք ժամերգության ժամանակ: Ժամերգության ընթացքում Հիսուս Քրիստոսը մեզ է նվիրում իր խոսքը, իր ողորմածությունը, իր մարմինն ու արյունը: Մենք միասնություն ենք կազմում նրանց հետ, ովքեր նույն նպատակն են հետապնդում և նույն ճանապարհով են գնում:

Համայնքում միասին ապրելը մեզ նախապատրաստում է Տիրոջ գալստյանը, քանի որ այստեղ մենք միասին աճում ենք դառնալով հարսնացու համայնք և սովորում ենք հաղթահարել այն, ինչը բաժանում է մեզ: Քրիստոսով միասին ապրելը նշանակում է, որ թույլ տաս քեզ ինչ-որ բան տալ մերձավորիդ, և նաև ստանալ նրանից:

Մնում է ողջերի և մահացածների միասնությունը: Քրիստոսով միասնությունն ավելի ուժեղ է, քան մահը: Ողջերն ու մահացածները միասին պատրաստվում են Քրիստոսի գալստյանը խոսքով և հաղորդության միջոցով: Հետո ողջերն ու մահացածները հավիտյան նրա հետ կլինեն:

Դա է մեր նպատակը, մենք միասին աշխատում ենք դրա ուղղությամբ: Համոզված եղեք. Աստված յուրայինների հետ է: Եվ առաքյալներն աղոթում են նրանց համար:

Բոլորին մաղթում եմ օրհնյալ 2022 թվական, որը մեզ ավելի առաջ կտանի դեպի մեր նպատակը՝ Քրիստոսով միասին:

Սրտանց ողջույններ՝



Ձեր՝ Ժան-Լյուք Շնայդեր

Ինչպես է Աստված հետաքրքրվում քեզնով

Առաջին ժամերգությունը, որը գլխավոր առաքյալ Ժան-Լյուք Շնայդերը 2020-ի մարտի ի վեր սկիզբ առած համավարակի պայմաններում կարողացավ անցկացնել Եվրոպայից դուրս, տեղի ունեցավ 2021-ի օգոստոսի 15-ին Դոդոմայում / Տանզանիա/

Լուսանկարները՝ Հուիրմիի, ՆԱԵ Տանզանիա

Մովսես1-ին 3,9

Տեր Աստված կանչեց Ադամին ու ասաց նրան՝ ,,Ո՞ւր ես,,

Իմ սիրելի եղբայրներ և քույրեր, ես պետք է ասեմ, որ իմ սիրտը լցված է ուրախությամբ և շնորհակալությամբ: 2020-ի մարտից ի վեր սա առաջին անգամն է, որ կարողանում եմ ճանապարհորդել Եվրոպայից դուրս: Սա առաջին անգամն է, որ ես կրկին կարողանում եմ մեծ շրջանակով ժամերգություն ապրել և վայելել այսքան մեծ երգչախմբի և նվագախմբի ելույթները: Սա մեծ ուրախություն և մեծ ողորմածություն է: Դուք գիտեք, որ աշխարհով մեկ ստիպված ենք եղել և այժմ էլ ստիպված ենք ապրել դժվար ժամանակներում: Եվ, եթե վարակը այստեղ՝ Տանզանիայում գուցե քիչ խնդիրներ է առաջացրել, քան մյուս երկրներում, ես գիտեմ, որ դուք էլ պայքարել եք շատ այլ խնդրիների

և դժվարությունների դեմ: Եվ ամեն անգամ, երբ մենք ստիպված ենք լինում հայտնվել նման դժվար ժամանակներում և պայմաններում, ապա նույն ոգին գալիս է նույն հարցով՝ ,, Ո՞ւր է ձեր Աստվածը, Ինչո՞ւ նա չի օգնում: Ինչո՞ւ նա չի խանգարում, որ դա քեզ հետ չպատահի: Ինչո՞ւ նա չի օգնում քեզ և թույլ է տալիս, որ կատարվի այդ սարսափելի բանը: Ո՞ւ է քո Աստվածը: / հմտ. սաղմոս 42,2/ Մենք գիտենք պատասխանը՝ ,, Աստված այստեղ է,,:

Հայր Աստվածը՝ Արարիչը, միշտ կատարում է իր գործը: Նա հոգ է տանում իր արարչագործության համար, նա մեզ համար հոգում է այն ամենը, ինչի կարիքն ունենք կյանքում: Նա այն մեկն է, ով տալիս է մեզ շնչելու օդ և ուտելու կերակուր: Նա մեզ նվիրում է այն ամենը, ինչի կարիքն ունենք մեր առօրյա կյանքի համար:

Ուրդի Աստվածը այստեղ է: Նա մեզ համար զոհվել է խաչին, վերադարձել է երկինք, իր Հոր մոտ, որպեսզի մեզ համար տեղեր պատրաստի: Հիմա նա իր Հոր մոտ է՝ որպես մեր բարեխոս և հովանավորում է մեզ / հմտ. Հովհաննես Ա 2,1/:

Գործում է Սուրբ Հոգի Աստվածը: Նա գործում է եկեղեցում, այնտեղ մեզ նվիրում է մխիթարություն, զորություն և ողորմածություն: Նա գործում է մեր սրտերում, որպեսզի առաջնորդի մեզ և մխիթարի: Իրականում մենք գիտենք, որ Աստված այստեղ է և աշխատում է մեզ համար:

Սակայն, Աստված դառնում է մեզ և հարցնում: Նա ասում է.,, Դուք գիտեք այժմ, թե որտեղ եմ ես, բայց, որտե՞ղ եք դուք,,: Դուք գիտեք այս պատմությունը՝ Ադամն ու Եվան մեծ մեղք գործեցին, և երբ նրանք գիտակցեցին, որ շատ վատ բան են արել, ամաչեցին: Այսինքն՝ թաքնվեցին, նրանք չինք ուզում Աստծո առաջ երևալ: Սակայն Աստված կանչեց նրանց և հարցրեց՝ ,, Որտե՞ղ եք,,: Այս հարցով Աստված ուզում էր պարզաբանել՝ ,, Ես ձեզ չեմ հալածի: Ես ապագայում էլ կհոգամ ձեզ համար: Դուք անհնազանդ եղաք և կկրեք այդ անհնազանդության հետևանքները, բայց ես դեռ սիրում եմ ձեզ և ուզում եմ ձեզ օգնել,,: Հիմա Աստված դառնում է մեզ և տալիս այս հարցը՝ ,, Ո՞ւր ես դու,,: Վստահաբար Աստված պատասխանի կարիք չունի, որպեսզի իմանա, թե որտեղ ենք մենք: Նա ամեն ինչ գիտի: Երբ նա այդ հարցն է տալիս, ապա ուզում է մեզ օգնել: Նա ուզում է մեզ օգնել, ստուգել, թե որտեղ ենք մենք գտնվում: Նա ցանկանում է մեզ օգնել, մեր հոգու վիճակը ստուգել, որպեսզի մենք կարողանանք փոխել այն, ինչը պետք է փոխվի:

Գուցե որոշների մոտ այնպես է, ինչպես Ադամի ու Եվայի մոտ, և նրանք ամաչում են, երբ հասկանում են և ասում՝ ,, Օ, մենք մեծ մեղավորներ ենք,,: Նրանք կարծում են, որ երբեք չեն հասնի նպատակին: Նրանք կարծում են, անարժան են Աստծո զավակ լինելու: Բայց Աստված դառնում է և ասում՝,,Ո՞ւր ես դու: Մի ամաչիր, մի վախեցիր: Արի, ես քեզ չեմ վանի, ես ուզում եմ քեզ նվիրել իմ ողորմածությունը: Մի վախեցիր, մի հապաղիր, արի ինձ մոտ: Ես սիրում եմ քեզ,,: Առաջին հարցը սա է՝ ,,Ո՞ւր ես դու: Մի վախիր: Արի, ես պատրաստ եմ ներել քեզ,,: Մեկ այլ հարց, որը Աստված տալիս է մեզ, այսպես է հնչում՝ ,, Հեյ, ո՞ւր ես դու: Դու ինձնից շատ ե՞ս հեռացել: Խնդրում եմ, քննիր քո հոգին, քննիր քո սիրտը: Նկատու՞մ ես, որ դու կամաց հեռանում ես ինձնից,,: Գուցե մենք մի քիչ հիասթափված ենք լինում, քանի որ Աստված չի լսել մեր աղոթքները: Նա չի կատարել մեր ցանկությունները, իսկ հիմա մենք մի քիչ նեղացել ենք և հեռանում ու հեռանում ենք Աստծուց: Նա մեզ ասում է. ,, Հեյ, ո՞ւր ես դու: Դու հեռանո՞ւմ ես: Մի մոռացիր, թե ես ինչ եմ արել քեզ համար,,: Աստծո Ուրդին երկիր չի եկել, որ հրաշքներ գործի: Նա չպետք է խաչի վրա մահանար, որպեսզի հիվանդներին բժշկեր: Նա եկել է, որ փրկի քո հոգին: Նա ցանկանում է քեզ վերջնականապես ազատել չարից, նրա նպատակը քեզ դեպի իր արքայություն առաջնորդելն է, որտեղ դու վերջնականապես ազատված կլինես չարից: Նա հարցնում է՝ ,, Ի՞նչ ես դու անում այդտեղ: Ետ արի, ես ցանկանում եմ քեզ վերջնականապես ազատել չարից և դեպի իմ թագավորություն առաջնորդել,,:

> Աստված դառնում է դեպի մեզ և հարց է տալիս՝ ,,Ո՞ւր ես,,:

Աստվածաշնչում մենք հարցերի շարք ենք գտնում: Եղիա մարգարեի միջոցով Աստված հարցնում է իր ժողովրդին. ,, Մինչև ե՞րբ պիտի կաղաք երկու ոտքով: Եթե Տերը Աստված է, գնացեք նրա հետևից,, / Թագ . Ա 18,21/: Աստված մեզ նույն հարցն է տալիս. ,, Ինչո՞ւ եք հապաղում: Եթե դուք հավատում եք ինձ, եթե հավատում եք Հիսուս Քրիստոսին, ապա վստահեք ինձ: Հիսուսն ասում է՝ ,, Ոչ ոք չի կարող երկու Տիրոջ ծառա լինել,, / Մատթեոս 6,24/: Պետք է որոշում կայացնել: Եվ այո, հնարավոր է, որ Աստված այս հարցերն առաջադրի, քանի որ մենք մի քիչ հապաղում ենք:

3876 հավատացյալ քույր-եղբայրներ կարողացան ուղիղ եթերով
մասնակցել գլխավոր առաքյալի կողմից անցկացվող ժամերգությանը

Եղբայրներ, քույրեր, մենք որոշել ենք, որ հետևելու ենք Քրիստոսին և ուզում ենք մերժել չարին, և մենք պետք է մնանք այս որոշման մեջ: Մենք պետք է մերժենք չարը և մեղքը, գնանք Աստծո ճանապարհով և հետևենք նրա պատվիրաններին: Մենք պետք է հնազանդության ճանապարհով գնանք, անգամ, եթե մեղքի ճանապարհն ավելի հեշտ և կարճ է թում ստանալու համար այն, ինչ մենք ուզում ենք: Երբեմն մենք հայտնվում ենք նման իրավիճակում և Աստված ուզում է մեզ հարցնել, թե մենք որ կողմում ենք կանգնած: Հետևիր հնազանդության ճանապարհին: Ես գիտեմ, ես դա լիովին գիտակցորեն եմ կրկնում, որ մեղքի ճանապարհը հեշտ և կարճ է թվում ստանալու համար այն ամենը, ինչը մենք ուզում ենք: Բայց մեզ համար պետք է պարզ լինի, որ մենք չենք կարող երկու Տիրոջ ծառայել: Մեր Տերն ու Վարդապետը Հիսուս Քրիստոսն է, և մենք պետք վերջնականապես նրա ճանապարհին հետևենք:

Մեկ ուրիշ անգամ Աստված Եղիա մարգարեին մեկ այլ հարց է տալիս / հմտ. Թագ. Ա 19, 9-18/: Եղիան թաքնվում է մի քարանձավում: Աստված գալիս է նրա մոտ և հարցնում՝ ,, Ինչո՞ւ ես այստեղ, Եղիա,,: Իսկ Եղիան բացատրում է՝ ,, Նախանձախնդրություն ունեցա ամենակալ Տիրոջ համար, քանզի իսրայելացիները լքեցին քեզ, քո զոհասեղանները կործանեցին և քո մարգարեներին սրակոտոր արեցին: Միայն ես եմ մնացել, և ինձ էլ փնտրում են, որ սպանեն,, / Թագ. գ 19, 9-10/: Սակայն Աստված նրան համապատասխան ձևով առարկում է՝ ,, Եղիա ինչո՞ւ ես այստեղ: Ես քո կարիքն ունեմ, որպեսզի ինձ համար աշխատեմ: Ետ գնա քո աշխատանքին: Կատարիր քո առաջադրանքը և դու կտեսնես, որ ես քեզ հետ եմ: Ես օրհնելու եմ քեզ,,:

Սիրելի եղբայրներ և քույրեր, սա վերաբերվում է ոչ միայն սպասավոր եղբայրներին, այլ մեզ՝ բոլորիս: Մենք պետք է Տիրոջը ծառայենք, բայց երբեմն թվում է, թե մենք ոչ մի հաջողություն չենք ունենում, որ ամեն ինչ իզուր է: Մենք ուզում ենք ծառայել Տիրոջը, բայց մենք մեր աշխատանքի արդյունքը չենք կարողանում տեսնել: Երբեմն մենք այն զգացումն ենք ունենում, որ միայն մենք ենք, որ ինչ –որ բան ենք անում, իսկ մյուսները ոչինչ չեն անում: Հետո մենք էլ ենք փորձում դադարեցնել մեր գործը: Այսօր Աստված գալիս և հարցնում է մեզ՝ ,,Հեյ, ինչո՞ւ ես այստեղ: Դուրս արի քո քարանձավից, ես քո կարիքն ունեմ,ես ուզում եմ, որ դու ինձ ծառայես,,:

Գուցե ետ գնանք քարանձավը, քանի որ հիասթափված ենք այլ մարդկանցից, մեր եղբայրներից և քույրերից: Մենք ուզում ենք միայնակ լինել և այլևս այդ մարդկանց հետ ոչ մի գործ չունենալ: Այդ դեպքում Աստված կանչում է մեզ՝ ,,

Ժամերգությունը սկսվեց և ավարտվեց երգչախմբի և լարային գործիքների նվագախմբի ելույթներով

Մենք վստահում ենք Աստծուն և հետևում ենք նրան՝ առանց հասկանալու, միայն մեր հավատի շնորհիվ

Դուրս արի քո քարանձավից: Ինչո՞ւ ես այստեղ: Ինտեգրվի Աստծո զավակների միաբանությանը: Ես քեզ հետ եմ, ես համայնքի հետ եմ, ես ձեր մեջ եմ, արի համայնք,,: Հիսուսն էլ է մի քանի հարցեր տալիս: Աշակերտները Տիրոջ հետ ծովի մեջտեղում էին և փոթորիկ է լինում / Ղուկաս 8, 22-25/: Դուք գիտեք այդ պատմությունը և գիտեք, որ Հիսուսը քնած էր: Նրանք սկսում են գոռալ, քանի որ այնքան էին վախեցել, որ կարծում էին, թե մեռնելու էին: Հիսուսը հացում է նրանց՝ ,, Ո՞ւր է ձեր հավատը,, / տող 25/: Եղբայրներ և քույրեր, սա մի հարց է, որը Տերը բավականին հաճախ է ինձ տալիս: Մենք մի իրավիճակում ենք, որից ոչ մի ելք չի երևում: Մենք մտածում և աղոթում ենք, բայց ոչ մի պատասխան չենք ստանում, ոչ մի բացատրություն, ոչ մի լուծում: Մենք պարզապես չենք կարողանում Աստծուն հասկանալ: Այդ դեպքում երկու հնարավորություն ենք ունենում՝ կամ դադարում ենք գործել, կամ վստահում ենք Աստծուն: Եվ դրա համար էլ Աստված հարցնում է մեզ՝ ,, Ո՞ւր է քո հավատը: Չ՞է որ դուք հավատում եք, որ ես ամենազոր եմ, դուք հավատում եք, որ ես գթասրտության Աստվածն եմ, դուք հավատում եք, որ սիրո Աստվածն եմ: Չէ՞ որ դա քո հավատն է: Ինչո՞ւ չես վստահում ինձ: Պարզապես քո հոգին դիր իմ ձեռքերում և վստահիր ինձ: Ես առաջնորդելու եմ քեզ,,:

Ես իմ փորձից գիտեմ, որ դա իսկապես հեշտ չէ: Մենք հաճույքով բացատրություններ կունենայինք, մենք ցանկանում ենք, որ Աստված մեզ մի լուծում ցույց տա: Այդպես է լինելու ինձ մոտ նաև ապագայում: Բայց Աստված մեզ ուրիշ ոչինչ չի ասում, այլ միայն՝ ,, Պարզապես վստահիր ինձ,,: Իմ սիրելի եղբայրներ և քույրեր, սա է մեր հավատը: Մենք հավատում ենք Աստծուն՝ Ամենազորին, սիրո Աստծուն, գթասրտության Աստծուն, և , եթե մենք բացարձակապես դրանից ոչինչ չենք հասկանում, թե ինչ է լինելու, ոչ մի տեղեկություն չունենք, թե ինչ է լինելու ապագայում, տեղեկություն չունենք, թե ինչ իրավիճակում ենք հայտնվելու, միևնույնն է, վստահենք Աստծուն և հետևենք նրան՝ առանց նրան հասկանալու, պարզապես մեր հավատի հիման վրա:

Մեկ այլ հարց էլ, որը նա տալիս էր աշակերտներին: Մի անգամ աշակերտները ճանապարհին էին և երբ վերադառնում էին Կապերնաում, Հիսուսը նրանց հարցնում է՝ ,, Ի՞նչ էինք խոսում ճանապարհին:/ Մարկոս 9, 33/,,: Այդ հարցը ամաչեցնում է աշակերտներին: Նրանք շփոթվում են, քանի որ նրանք այդ ժամանակ վիճում էին այն մասին, թե ով է իրենցից ամենամեծը: Իհարկե, Հիսուսը գիտեր պատասխանը և կարիք չկար հարցը տալու: Բայց նա ուզում էր, որ նրանք գիտակցեն, որ դա լավ բան չէր:

Դա այն հարցն է, որ Հիսուսը տալիս է իր եկեղեցում իր հարսնացուին՝ ,, Ինչի՞ մասին էինք խսում երկնային Երուսաղեմ տանող ճանապարհին,,: Այս հարցին մենք լրջորեն բացատրություն կտայինք: Եղբայրներ և քույրեր, ինչի՞ մասին ենք մենք խոսում: Մեր կողակցի հետ, ընտանիքում, համայնքում մենք

Շրջանային առաքյալի օգնական Ռոբերտ Մ. Նսամբան հրավիրվեց քարոզի / ձախում/

կարող ենք ամեն ինչի մասին խոսել, բայց ինչպե՞ս ենք մենք խոսում եկեղեցու մասին: Ինչպե՞ս ենք խոսում սպասավոր եղբայրների մասին: Ինչպե՞ս ենք խոսում մեր եղբայրների ու քույրերի մասին: Խոսո՞ւմ ենք Աստծո մասին: Ինչպե՞ս ենք խոսում նրա մասին: Այն ձևը, որով մենք արտահայտվում ենք, և նաև մեր երկխոսության բովանդակությունը, որոշում են մթնոլորտը մեր ընկերություն մեջ, ընտանիքում, համայնքում: Դրա համար էլ շատ կարևոր է, որ հասկանանք, թե ինչ ենք խոսում: Երեխաները լսում են, թե ինչի մասին ենք մենք խոսում, և նրանք այդպես էլ ընդունում են այն: Ուրեմն եկեք զգույշ լինենք և կենտրոնանանք ճիշտ բաների վրա: Երկնային Երուսաղեմ տանող ճանապարհին զբաղվենք այս հարցով՝ ,, Ինչի՞ մասին ենք մենք խոսում,,:

Թույլ տվեք անդրադառնալ Տեր Հիսուսի մեկ այլ հարցին: Հիսուսը գալիս է Պողոսի մոտ և հարցնում նրան՝ ,, Ինչո՞ւ ես հալածում ինձ,,/ Գործք 9, 4/: Դա մի հատուկ հարց էր: Հիուսն ուզում էր պարզաբանել հետևյալը՝ ինչ դու անում ես իմ եղբայրների և քույրերի համար, անում ես նաև ինձ համար: Մեր Հայրը մեզ տալիս է նույն հարցը՝ ,, Ինչո՞ւ ես հալածում ինձ,,: Իհարկե, մենք մտադիրն չենք հալածել մեր քույր- եղբայրներին: Դա այն չէ, ինչ ուզում է Աստված մեզ ասել: Երբ նա այդ հարցը տալիս է, նա ուզում է, որ մենք գիտակցենք, որ այն , ինչ անում ենք մեր մերձավորի, մեր եղբոր, մեր քրոջ, նրանց երեխաների համար, դա անում ենք նաև իր համար:

Թույլ տվեք դա այլ ձևով բացատրել: Եթե մենք որոշում ենք, թե ինչպես պետք է վերաբերվենք մեր մերձավորին, երբ որոշում ենք, թե ինչ պետք է անենք մեր եղբոր, մեր քրոջ համար, ինչպես պետք է խոսեքն նրանց հետ, ինչ պետք է անենք, ապա չպետք է մտածենք, թե նրանք ինչ ենք արել մեզ համար: Ամենից առաջ մենք պետք է մտածենք, թե ինչ է մեզ համար արել Հիսուսը, ինչպես է նա գործել մեր հանդեպ: Այդ դեպքում մենք կարող նեք որոշել, թե ինչ ենք անելու մեր մերձավորի համար: Քո մերձավորը վիրավորել է՞ քեզ և դու զայրացած ե՞ս: Հիշիր, որ Հիսուսը ներել է քեզ: Հիշիր այն ամենի մասին, ինչ դու արդեն արել ես և ամեն անգամ Հիսուսն եկել ու ասել է՝ ,, Ես ներում եմ քեզ,,: Հիշիր այդ մասին և թույլ տուր, որ այն ներգործի քո սրտի վրա: Եվ ապա որոշեք, թե ինչպես պետք է վերաբերվեք ձեր մերձավորին: Դու հիասթափված ես, քանի որ քո մերձավորը խոստացել է օգնել, բայց չի օգնել: Դու տխուր ես, քանի որ նա վատ բաներ է ասել քո մասին: Զսպիր քեզ, նախքան արձագանքելը: Մտածիր քո մասին և քո սեփական պահվածքի մասին՝ ինչքան հաճախ ես դու Տիրոջը ինչ-որ բան խոստացել և չես կարողացել քո խոստումը կատարել: Ինչքան հաճախ ենք մենք նախատել, երբ

Սուրբ Հաղորդության տոնակատարություն / վերևում/
Գլխավոր առաքյալ Ժան-Լյուք Շնայդերը ձեռնադրում է առաքյալներ
Դանիել Օկո Օխոգոյին և Կոսմաս Բարասա Վանջալային / աջում/

աղոթքը չի լսվել: Իսկ նա ինչպե՞ս է արձագանքել: Երբ մենք գիտակցում ենք դա, կարողանում ենք որոշել, թե ինչպես պետք է վերաբերվենք մեր մերձավորին:

Տեսնո՞ւմ եք, սիրել եղբայրներ և քույրեր, սրանք մի քանի հարցեր են, որը մեզ է տալիս Սուրբ Հոգին: Եկեք այս հարցերը մեր սրտերում կրենք: Դա մեզ համար փրկություն է: Հիսուսի պատասխանը միշտ նույնն է՝ ,, Ինչ էլ պատահի, որտեղ էլ լինես, արի: Ես սիրում եմ քեզ, ես ներում եմ քեզ, ես ուզում եմ փրկել քեզ: Հետևիր ինձ մինչև վերջ: Իմ օգնությամբ դու կարող ես անել:

Շրջանային առաքյալի օգնականների և շրջանային առաքյալների քարոզներից հետո գլխավոր առաքյալն ասաց՝ Որտե՞ղ է քո Աստվածը: Մենք այսօր կարող ենք Աստծո ներկայությունը Սուրբ Հաղորդության տոնակատարության ժամանակ ապրել: Մենք Սուրբ Հաղորդությունը տոնում ենք Հիսուս Քրիստոսի զոհաբերությունը հիշատակելով: ,, Հիշիր, որ քեզ համար խաչվեց,,: Որտե՞ղ է այսօր Հիսուսը: Նա իր ողորմածությամբ և քեզ համար իր բարեխոսությամբ մոտենում է իր Հոր գահին: Նա ներում է քեզ, քո մեղքերն ու պարտքերը:

Որտե՞ղ է Հիսուսը: Նա Սուրբ Հաղորդության միջոցով այստեղ մեզ հետ է: Որտե՞ղ է Հիսուսը: Նա կանգնած է քո եղբոր և քո քրոջ կողքին: Մինչ մենք տոնում ենք Սուրբ Հաղորդությունը, մեզնից յուրաքանչյուրը կարող է տեսնել, որ նա իմ մերձավորին, իմ եղբորը և իմ քրոջը նույն ողորմածությունն ու նույն նշխարն է տալիս: Նա ասում է ինձ՝,, Ես քեզ ներում եմ: Ես սիրում եմ քեզ: Ես քեզ համար տվել եմ իմ արյունը, տվել եմ իմ մարմինը,,:

Եվ իմ եղբորն ու իմ քրոջը ասում և նվիրում է նույնը: Հիմա մենք գիտենք, որտեղ է Հիսուսը, իսկ հիմա նա հարցնում է մեզ՝ ,, Որտե՞ղ եք,,: Մի հապաղեք: Եկեք դեպի Հիսուսը, նա ուզում է ձեզ ներել: Գուցե մենք մեր մտքերում և սրտերում մի քիչ հեռացել ենք Հիսուսից: Եկեք : Այո, մենք պետք է նրան ծառայենք, այո, մենք պետք է նրան վստահենք, ինչ էլ լինի:

Գուցե մեր խոսքը լավագույնը չէ: Եկեք ուշադրություն դարձնենք, թե ինչի մասին և ինչպես ենք խոսում: Գուցե մենք այլ կերպ ենք վարվել մեր եղբայրներ և քույրերի հանդեպ: Եկեք, Սուրբ Հաղորդության միջոցով հնարավոր է մեզ համար դա անելը: Մենք՝ բոլորս, դրանից ուժ ենք ստանում, որի կարիքը մենք ունենք:

Հիմնական մտքեր

- Սուրբ Հոգին մեզ հրավիրում է մոտ գալ Աստծուն, վստահել նրան և ծառայել նրան:
- Մերձավորի հանդեպ մեր պահվածքը լցված է այն սիրով, որը Տերն է մեզ վկայում:
- Մեր խոսքերը արտացոլում են այն բարին, ինչ Աստված անում է մեզ համար:

ՀԱԿՈԲԸ ԽՈՐԱՄԱՆԿՈՒԹՅԱՄԲՆՎԱՃԵՑ ԱՆԴՐԱՆԻԿՈՒԹՅԱՆ ՕՐՀՆԱՆՔԸ

ԸՍՏ ՄՈՎՍԵՍԻ 1-ԻՆ ԳՐՔԻ 25, 29-34-Ի / 27-Ի

Եսավն ու Հակոբը երկվորյակներ էին: Եսավը՝ ավագը, շեկ էր, նրա մաշկը թավամազ էր, կարծես ծածկված լիներ մորթով: Նա որսորդ էր և վայրենաբարո: Հակոբն ուներ հարթ մաշկ: Նա մեղմաբարո էր և տնակեաց: Իսահակը՝ հայրը, Եսավին էր շատ սիրում և հաճույքով ուտում նրա որսից պատրաստված կերակուրները: Իսկ Հակոբը մոր՝ Ռեբեկայի սիրելի տղան էր:

Մի անգամ Հակոբը ապուր էր եփել, երբ նրա եղբայր Եսավը դաշտից վերադարձավ : Նա հոգնած էր և ցանկանում էր, որ Հակոբը իրեն կերակուր տա: Հակոբն ասում է. ,, Կտամ, եթե այսօր ինձ վաճառես քո անդրանիկությունը,,: Եսավը պատասխանում է նրան.,, Ես քաղցից մեռնելու վրա եմ, ինչի՞ս է պետք անդրանիկությունը,,: Նրա համար անդրանիկությունը նշանակություն չուներ: Եսավը իր անդրանիկությունը փոխում է ուտելիքի հետ, իսկ Հակոբը նրան տալիս է հաց և ապուր: Երբ Իսահակը ծերանում է և նրա աչքերը լավ չեն տեսնում, կանչում է Եսավին՝ իր ավագ որդուն: Իսահակն ասում է նրան. ,, Ես ծերացել եմ և չգիտեմ, թե երբ կմեռնեմ: Վերցրու քո կապարճն ու աղեղը, գնա դաշտ և ինձ համար որս արա: Ինձ համար պատրաստիր իմ սիրած խորտիկները և բեր, մատուցիր ինձ, որ ուտեմ և օրհնեմ քեզ,,: Ռեբեկան լսում է այս խոսքերը, եվ երբ Եսավը դաշտ է գնում, որպեսի որս անի, Ռեբեկան մի կողմ է տանում Հակոբին և պատմում նրան, ինչ լսել էր: Նա նրան ուղարկում է հոտի մոտ, որ երկու մատղաշ ու ընտիր ուլ բերի: Դրանցից նա ուզում էր հոր համար նրա սիրած խորտիկները պատրաստել: Հաբոկը պետք է դա մատուցեր հորը, որ նա իրեն օրհնի և ոչ՝ եղբորը: Հակոբն ասում է մորը. ,, Իմ եղբայր Եսավը մազոտ է, իսկ ես՝ լերկ: Երբ իմ հայրը ինձ շոշոփի, կնկատի, որ ես ուզում եմ իրեն խաբել, նա ինձ կանիծի, և ոչ թե կօրհնի,,: Նրա մայրը պատասխանում է. ,, Արա այն, ինչ քեզ ասում եմ,,: Հակոբը ուլերը բերում է իր մոր մոտ, իսկ նա պատրաստում է հոր սիրած կերակուրը: Հետո նա Հակոբին հագցնում է Եսավի պատմուճանը, ուլի մորթին փաթաթում է նրա թևերին ու մերկ

պարանոցին: Նա իր պատրաստած խորտիկներն ու հացը տալիս է Հակոբի ձեռքը:
Հակոբն այն տանում է իր հոր համար: Նա հարցնում է.,, Ո՞վ ես դու,,: Հակոբը պատասխանում է.,, Ես Եսավն եմ, քո անդրանիկ որդին: Արեցի այնպես, ինչպես ասացիր ինձ: Արի նստիր ու կեր իմ որսից, որ օրհնես ինձ,,:
Իսահակը հարցնում է որդուն. ,,, Այդ ինչպե՞ս է ,որ այդքան շուտ որս գտար,,:
Նա պատասխանում է. ,, Տերը, քո Աստված տվեց այն ինձ,,:
Հետո նա Հակոբին թույլ է տալիս, որ մոտենա իրեն, որպեսզի շոշափի նրան, իմանալու համար,որ նա իսկապես Եսավն է: ,,Ձայնդ Հակոբի ձայնն է, բայց ձեռքերդ Եսավի ձեռքերն են,, . ասում է նա: Նա չի ճանաչում Հակոբին, քանի որ նրա ձեռքերը Եսավի ձեռքերի նման մազոտ էին:
Իսահակն ուտում և խմում է: Նա գրկում է Հակոբին: Այդ պահին նա առնում է Եսավի հագուստի հոտը և օրհնում է նրան.,, Տես, իմ որդին Տիրոջ օրհնված արտի հոտն ունի: Թող Աստված քեզ մաս հանի երկնքի ցողից, երկրի պարարտությունից և ցորենի ու գինու առատություն պարգևի: Թող քեզ ծառայեն ժողովուրդները, և իշխանները թող քեզ երկրպագեն: Քո եղբոր տերը լինես, թող երկրպագեն քո հոր որդիները: Ով անիծի քեզ, ինքն անիծյալ թող լինի, իսկ ով օրհնի քեզ, ինքն օրհնյալ թող լինի,,: Հազիվ էր հայրն իր օրհնանքն ավարտել և Հակոբը դուրս եկել, երբ որսից գալիս է Եսավը և նս խորտիկներ պատրաստում: Նա դա մատուցում է հորը: Իսահակը հարցնում է.,, Ո՞վ ես դու,,:
Նա պատասխանում է. ,, Ես Եսավն եմ՝ քո անդրանիկ որդին,,:
Իսահակը զարմանում է և հարցնում.,, Իսկ ո՞վ էր, որ ինձ համար որս որսաց, բերեց մատուցեց, ես կերա ամենից, երբ դու չէիր եկել, օրհնեցի նրան, և նա թող օրհնյալ լինի,,:
Երբ Եսավը լսում է այս խոսքերը, բարձր գոռում է և շատ տխրում: Նա ասում է իր հորը.,, Արդ, ինձ էլ օրհնիր, հայր: Չե՞ս կարող ինձ էլ օրհնել,,:
Բայց Իսահակը պատասխանում է.,, Քո եղբայրը եկավ նենգությամբ և առավ քեզ համար սահմանված օրհնությունը,,:
Եսավի զայրույթից վախենալով՝ Հակոբը ստիպված է լինում փախչել:



Աղբյուրը՝ Աստվածաշունչ՝ Մենք՝ երեխաներս, հրատարակություն 09/2020, ձևավորումը՝ Միրեյա Ֆորտունատոյի

ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆ ՎԵՐԱՅԻՆ՝ ՍԻՆԳԱՊՈՒՐՈՒՄ

Իմ անունը Վերա Քլոյե է, իմ ծնողների հետ ես ապրում եմ Սինգապուրում: Սինգապուրը մի փոքր երկիր է Հարավ-Արևելյան Ասիայում: Դա ֆինանսական կենտրոն է և զբոսաշրջության նպատակակետ:

2011-ի դեկտեմբերի 1-ին ես ծնվեցի նորառաքելական մի ընտանիքում, իմ հոր անունը Գարի է, իսկ մորս անունը՝ Նեսիլ: Ես երկուսին էլ շատ եմ սիրում: Իմ հայրը քարոզիչ է, նա աշխատում է բանկում: Իմ մայրը օգնում է հաճախորդներին եվրոպական երկրներ մուտքի թույլտվությունների դիմումների գործում:

Իմ ծննդյան յոթերորդ տարեդարձից առաջ իմ ծնողները ինձ նվիրեցին փոքրիկ նապաստակ: Դա ամենալավ նվերն է, որը ես երբևէ ստացել եմ: Ես նրան անվանեցի Ծիածան, թեև նա գույնզգույն չէր, այլ՝ շագանակագույն և սպիտակ:

Ես հաճախում եմ իգական դպրոց: Շաբաթվա վերջին օրերին ես իմ ծնողների հետ նույն ավտոբուսով եմ մեկնում, հայրս և ես իջնում ենք իմ դպրոցի մոտ ու ոտքով գնում դպրոց: Նախքան դասերը սկսվելը մենք նախաճաշում ենք դպրոցի դարպասի մոտ:

Իմ դպրոցում մենք խոսում ենք տարբեր մշակույթների մասին, մենք ոգևորվում ենք տոնական օրերին մեր դպրոցական համազգեստի փոխարեն որևէ ավանդական հագուստ կրելիս: Այս տարի չինական ամանորյա տոնին ես հագնելու եմ իմ Չենգզամը:

Մենք ապրում ենք հանգիստ հարևանների կողքին: Մեր բնակարանն ունի երեք ննջասենյակ, և թեև ես իմ անձնական սենյակն ունեմ, սիրով քնում եմ իմ ծնողների մոտ: Երեկոյան մինչ քնելու գնալը միասին աղոթում ենք, մի քիչ զրուցում ենք և հետո միմյանց բարի գիշեր ենք մաղթում:

Մեր ժամերգությունները տեղի են ունենում հյուրանոցներից մեկում: Այնտեղ ամեն կիրակի մեր եկեղեցին վարձում է նիստերի սրահը: Առաջ ես միակ երեխան էի համայնքում: Ես ուրախ եմ, որ վերջին երկու տարում հինգ այլ երեխա է գալիս, ամեն կիրակի մենք կիրակնօրյա դպրոց ենք հաճախում:

Այս տարվա մի շաբաթ օր մենք գնացինք մոտակա հանրախանութ և իմ ծնողներն ինձ համար ջութակ գնեցին: Իմ մայրն ուզում է ինձ ջութակ նվագել սովորեցնել: Ես նվագում եմ սրինգ,

քսիլոֆոն և երգում եմ դպրոցական երգչախմբում:

Երբեմն մայրս ու ես միասին հաց ենք թխում կամ ինչ-որ բան եփում: Ես շատ եմ սիրում սոխով ձվաձեղը: Ես դա ուտում եմ նաև այն ժամանակ, երբ իմ ծնողներն ուտում են մի բան, որը ես չեմ սիրում, օրինակ, միս: Կամ էլ ես մայրիկին խնդրում եմ իմ սիրելի ուտեստը՝ նա պատրաստում է աշխարհի ամենալավ սպագետտին:

Աղբյուրը՝ Ամագիր՝ Մենք՝ երեխաներս, հրատարակություն 09/2020, լուսանկարները՝ մասնավոր; © marishayu; © anekoho - stock.adobe.com

Լուսանկարը՝ © Ցենկո Աթանասի - stock.adobe.com

Եկեղեցին ,,այո,, է ասում կյանքին

Ընտանիքի պլանավորումը և հղիության կանխումը սկզբունքորեն բացառապես զույգերի գործն է: Սակայն, եկեղեցին այս առումով որոշում կայացնելու համար օգնություն է առաջարկում: Այստեղ չափանիշը հետևյալն է՝ չսպանել ձևավորվող կյանքը:

Հիմքում ընկած են նորառաքելական եկեղեցու տեսակետները ,, մարդկային կյանքի սկզբի և ավարտի,, վերաբերյալ, որոնք ներկայացվել են քրմյունիթիի 1/2021 և 2/2021 համարներում: Ստորև ներկայացվող մեկնաբանություններն առաջին հերթին վերաբերում են առանձին մեթոդների ազդեցություններին: Անվտանգությունն ու կողմնակի ազդեցությունները մնում են առանց մանրակրկիտ ուսումնասիրության և անհրաժեշտ է լինում լրացուցիչ ուսումնասիրել:

Այդ մեկնաբանությունները չեն կարող փոխարինել մասնագետ բժշկի անհատական խորհրդատվություններին, մանավանդ, որ որոշակի դեպքերում հղիության կանխման մեթոդները կարող են առողջական ռիսկեր պարունակել:

Ուշադրությունից դուրս են մնում նաև տարբեր մշակութային և հասարակական սովորույթները, որոնք ազդում են մեթոդների ընտրության վրա: Հատկապես՝ անցնումը ավանդական բժշկության մեթոդներին: Այն մեթոդները, որոնք գիտական հիմնավորում չունեն, քննարկման ենթական չեն:

Հակաբեղմնավորման հորմոնալ միջոցները սովորաբար ունեն գործողության մի քանի մեխանիզմներ և միջամտում են բնական կենսացիկլին տարբեր կետերում (օրինակ՝ ձվազատման արգելակում և բեղմնավորված ձվաբջիջի իմպլանտացիայի կանխարգելում):

Բոլոր մեկնաբանությունները կարող են արվել միայն ներկայումս առկա բժշկակենսաբանական գիտելիքների և ուսումնասիրությունների արդյունքների հիման վրա:

Ինչպես են աշխատում մեթոդները

Հակաբեղմնավորումը կարող է տեղի ունենալ տարբեր ձևերով: Օվուլյացիայի ճնշումը կամ կանխարգելման մեթոդները կանխում են ձվաբջիջի բեղմնավորումը սերմնաբջիջով (A): Այլ մեթոդներ (B) կանխում են բեղմնավորված ձվաբջիջի զարգացումը: Որոշ մեթոդների համար (C) գործողության հիմնական եղանակը կախված է կիրառման ժամանակից:

Հակաբեղմնավորման մեթոդի հիմնական էֆեկտը կարող են իմանալ մասնագետի մոտ: Օրինակ, կարելի է հարցնել, թե արդյոք բեղմնավորումը կանխվում է: Հակաբեղմնավորիչի հիմնական ազդեցության մասին տեղեկությունները կարելի է գտնել նաև արտադրողի կողմից տրամադրված արտադրանքի և մասնագիտական տեղեկատվության մեջ:

(A) Կանխարգելել բեղմնավորումը

Ճնշել ձվազատումը
Որոշակի սեռական հորմոնների ներծծման միջոցով / օր. որպես դեղահաբ կամ որպես պրեպարատ, որը դրվում է հեշտոցի կամ արգանդի մեջ / փոխվում է մարմնի սեփական հորմոնալ վերահսկումը այնպես, որ ձվազատում /օվուլյացիա/ չի լինում:

Գործողության այս եղանակն ունեն և՛ այսպես կոչված համակցված, էստրոգեն և պրոգեստին պարունակող հակաբեղմնավորիչները, և միայն պրոգեստին պարունակող որոշ հակաբեղմնավորիչներ:

Հորմոնալ հակաբեղմնավորիչները, որոնց հիմնական ազդեցությունը օվուլյացիան ճնշելն է, ունեն գործողության այլ, ստորադաս եղանակներ, ինչպիսիք են լորձի խցանումը արգանդի վզիկի վրա, նուրբ մազիկների շարժունակության արգելակումը արգանդափողում և արգանդի լորձաթաղանթի ձևափոխումը ձվաբջիջի հնարավորինս ավելի դժվար իմպլանտացիայով:

Կարևոր ցուցում՝ հորմոնալ պրեպարատները շատ անվտանգ են հղիության կանխարգելման առումով: Նախապայմաններն են՝ ճիշտ օգտագործումը և այլ խանգարող գործոնների բացառումը, ինչպիսիք են դեղերի փոխազդեցությունը, աղիների միջոցով կլանման խանգարումը կամ լյարդի կողմից արագացված դեգրադացիան, ինչը կարող է թուլացնել կամ խանգարել ազդեցությունը:

Ցուցում կրծքով կերակրման վերաբերյալ. կրծքով կերակրումը նաև ազդում է մարմնի սեփական հորմոնների վերահսկման վրա այնպես, որ ձվազատումը հազվադեպ է առաջանում: Այնուամենայնիվ, քանի որ սա շատ վտանգավոր է, մենք չենք կարող խոսել հակաբեղմնավորման մեկ մեթոդի մասին:

Խոչընդոտների ստեղծում
Խոչընդոտող մեթոդներն այն նախազգուշական միջոցներն են, որոնք կանխում են սերմնաբջիջների և ձվի բջիջների միավորումը: Ավանդական բժշկական օգտակար պրակտիկ միջոցներն են՝

- տղամարդու կամ կնոջ համար պահպանակ, որը նաև հիանալի պաշտպանություն է սեռական ճանապարհով փոխանցվող հիվանդություններից:
- արգանդի վզիկի գլխարկը կամ դիֆրագման (արգանդի վզիկի առաջ սիլիկոնե գլխարկ)
- կնոջ ստերիլիզացումը (ֆալոպյան խողովակի կապանի փակում) կամ
- տղամարդու ստերիլիզացում (սերմնահեղուկի խողովակի կապանի փակում)

Սերմաբջիջների սպանում
Օգտագործվում են հեշտոցային քսուքներ, մոմիկներ կամ ողողումներ, որոնց բաղադրամասերը պետք է սերմնաժայթքումից հետո հեշտոցի մեջ սպանեն սերմնաբջիջները : (Նշում. սա ինքնին շատ վտանգավոր մեթոդ է, որը խորհուրդ է տրվում միայն պահպանակների հետ համակցված):

Տարածություն պահպանել
Օվուլյացիայից հետո ձվաբջիջը կարող է բեղմնավորվել միայն հաջորդ 12 (24) ժամվա ընթացքում: Այս փուլը հաշվարկելու համար կարող են օգտագործվել տարբեր մեթոդներ.
- Օրացույցային մեթոդ («Knaus Ogino» օվուլյացիայի որոշում ցիկլային օրացույցի միջոցով)
- Ջերմաստիճանի մեթոդ (օվուլյացիան որոշելը մարմնի ջերմաստիճանը չափելով)
- «Բիլինգի մեթոդ» (օվուլյացիայի որոշում հեշտոցային սեկրեցիայի գնահատմամբ)
- Սիմպտոթերմային մեթոդ (ջերմաստիճանի և հաշվարկային մեթոդի համադրություն)
- Ընդհատված սեռական ակտ (coitus interruptus). առնանդամը հանվում է հեշտոցից մինչև սերմնաժայթքումը: (ցուցում. շատ վտանգավոր է!))

Հակաբեղմնավորման այս տեսակը հաճախ անվանում են «բնական հակաբեղմնավորում»: Կա՛մ զույգը ձեռնպահ է մնում այս ձևով որոշված բեղմնավորման փուլում, կա՛մ, օրինակ, այս օրերին հակաբեղմնավորման համար օգտագործում է պահպանակներ:

(B) Հետագա զարգացումը կանխելը

Բնադրման բլոկադա
Բեղմնավորումը, այսինքն՝ սերմնահեղուկի և ձվի բջջի միացումը տեղի է ունենում արգանդափողով: Այնուհետև վաղ սաղմը հինգ օրվա ընթացքում արգանդափողով գաղթում է դեպի արգանդ: Հետագա զարգացման համար սաղմը պետք է բնադրվի արգանդի լորձաթաղանթում: Դա շատ բարդ գործընթաց է: Շատ հաճախ բնական գործընթացում դա հանգեցնում է նաև սաղմի կորստի: Որոշ հակաբեղմնավորիչ մեթոդներ կանխում են այս բնադրումը: Սաղմը չի կարողանում հետագայում զարգանալ և մահանում է:

Բացի պղինձ կամ ոսկի պարունակող ներարգանդային պարույրներից, այս հակաբեղմնավորիչ մեթոդները ներառում են բոլոր հորմոնալ հակաբեղմնավորիչները, որոնց հիմնական ազդեցությունը օվուլյացիան չճնշելն է:

Սաղմը հեռացնելը
Աբորտը կարող է կանխել սաղմի հետագա զարգացումը նույնիսկ հաջող իմպլանտացիայից հետո: Սովորաբար օգտագործվում են հետևյալ մեթոդները՝

- Հղիության դադարեցում միֆեպրիստոնի օգտագործմամբ (վիժում հակահորմոնալ ազդեցության միջոցով)
- Հղիության վիրաբուժական ընդհատում (սաղմի կամ պտղի հեռացում արգանդից քերման միջոցով)

(C) Ժամանակից կախված մեթոդներ

Ի սկզբանե պարզվել է, որ հորմոնալ հակաբեղմնավորիչները գործողության մի քանի եղանակներ ունեն: (A) և (B) կետերում նշվածների դեպքում կարելի է հստակորեն նշել գործողության էական եղանակը: Այստեղ թվարկվածների դեպքում գործողության եղանակը կախված է կիրառման ժամանակից: Միայն ձվազատման ճնշումը չի կարող վստահ արդյունք տալ:

- Եռամսյա ներարկում. Դեղին մարմնի հորմոններ պարունակող ներարկումները արվում են յուրաքանչյուր տասներկու շաբաթը մեկ: Շատ կարևոր է տեսնել, որ օվուլյացիան ճնշվում է միայն օգտագործման առաջին չորսից- ութ շաբաթների ընթացքում: Այնուհետև հնարավոր է բեղմնավորում, բայց միևնույն ժամանակ կարելի է կանխել իմպլանտացիան արգանդում:
- Արտակարգ հակաբեղմնավորում կամ ,, դեղահաբ,,. երբ ընդունվում է օվուլյացիայից առաջ, ապա դրա ազդեցությունը մի քանի օրով հետաձգում է օվուլյացիան, այնպես որ, բեղմնավորում չի կարող լինել: Մի քանի մասնագիտացված ընկերություններ սա

վերագրում են օգտագործվող լևոնորգեստրել և ուլիպրիստալ ացետատ նյութերի ազդեցությանը: Եթե ընդունվում է օվուլյացիայից հետո, ապա դեղահաբն անարդյունավետ է: Այստեղից կարելի է եզրակացնել, որ բեղմնավորված ձվաբջիջի իմպլանտացիայի կամ հետագա զարգացման վրա չի ազդում: Սակայն, տվյալների բազան, որի վրա հիմնվում են մասնագիտացված ընկերությունները, շատ փոքր է:

Գնահատում

Հետևելով այն հիմնական հայտարարությանը, որ ոչ մի բեղմնավորված ձվաբջիջ չպետք է սպանվի, կարող են օգտագործվել բոլոր մեթոդները, որոնց գործողության հիմնական եղանակը սերմնաբջջի կողմից ձվաբջիջի բեղմնավորումը կանխելն է: Այն մեթոդները, որոնք էական նշանակություն ունեն արգանդում սաղմի իմպլանտացիայի կանխարգելման համար, կամ որոնք կապված են աբորտի հետ, պետք է մերժվեն: Մեթոդները, որոնք զգալիորեն կանխում են՝ ձվաբջիջի բեղմնավորումը, և՝ բեղմնավորված ձվաբջիջի հետագա զարգացումը (երբեմն ժամանակային առումով տեղափոխված) պետք է առնվազն քննադատաբար դիտարկվեն: Անհետաձգելի հակաբեղմնավորման « դեղահաբը» շատ տարբեր է գնահատականների է արժանանում: Դրա օգտագործումը մտահոգություն չի հարուցում օվուլյացիայի բացառիկ հետաձգման գործում, այդպես են արտահայտվում մասնագետները: Այնուամենայնիվ, քննադատները առկա ուսումնասիրությունները համարում են անբավարար և ունեն մտահոգություններ:

Նոր առաքելական եկեղեցու կարծիքը հակաբեղմնավորման վերաբերյալ

Նոր առաքելական եկեղեցին չի կարող մանրամասն առաջարկություններ տալ ընտանիքի պլանավորման թեմայի վերաբերյալ՝ ելնելով տարբեր մշակույթներից և անհատական հանգամանքներից: Եկեղեցու ընդհանուր սկզբունքներն՝

- Ընտանիքի պլանավորումը (ծննդաբերության վերահսկողությունը) սկզբունքորեն բացառապես ամուսնական զույգի խնդիրն է:
- Ամուսնության մեջ սեքսուալությունը աստվածահաճո է՝ որպես ամուսինների միջև միմյանց հանդեպ սիրո արտահայտություն: Մարդը պարտավոր է պատասխանատվությամբ և խելամտորեն վերաբերվել իր սեքսուալությանը: Սա ներառում է նաև այն որոշումը, թե քանի երեխա կցանկանար ունենալ ամուսնական զույգը:
- Ծնելիության վերահսկումը կարող է իրականացվել հակաբեղմնավորիչ միջոցների և նմանատիպ ձեռնարկումների միջոցով:
- Եկեղեցին առարկություն չունի հակաբեղմնավորիչների նկատմամբ, որոնց հիմնական նպատակը ձվաբջիջների բեղմնավորումը կանխելն է: Մյուս կողմից, եկեղեցին մերժում է այն միջոցներն ու մեթոդները, որոնք էապես կանխում կամ սպանում են արդեն իսկ բեղմնավորված ձվաբջիջի հետագա զարգացումը:
- Հակաբեղմնավորման մեթոդի հիմնական էֆեկտը կարելի է իմանալ մասնագետից: Հակաբեղմնավորիչի հիմնական ազդեցության մասին տեղեկությունները կարելի է գտնել նաև արտադրողի կողմից տրամադրված արտադրանքի և մասնագետների մասին տեղեկատվության մեջ:
- Պահպանակների օգտագործումը հակաբեղմնավորիչի համար պաշտպանում է նաև ՁԻԱՀ-ի նման հիվանդությունների փոխանցումից:

Ամփոփում

Եկեղեցին «այո» է ասում կյանքին: Ընտանիքի պլանավորումը ամուսնական զույգի գործն է, սակայն եկեղեցին մերժում է ծնելիության վերահսկման այն մեթոդները, որոնց հիմնական ազդեցությունը բեղմնավորված ձվաբջիջների սպանությունն է: Չպետք է խանգարել ձևավորված կյանքի զարգացմանը:

Խմբագրական
Հրատարակիչ՝ Ժան- Լյուք Շնայդեր, Իուբերլանդսսթրասսե 243,8051 Ցյուրիխ / Շվեյցարիա
Ֆրիդրիխ Բիշոֆֆ հրատարակչություն ՍՊԸ, Ֆրանկֆուրտյան փողոց 233,63263 Նոյ-Իզենբուրգ/Գերմանիա
Խմբագիր՝ Փեթեր Յոհաննինգ

Լուսանկարը՝ Օլիվեր Ռուրթենի

Միասնությունը ճանապարհ ու նպատակ է

Հավատացյալների համայնքում վարժվել Աստծո հետ հավերժական միասնությանը՝ ահա թե ինչպես է գլխավոր առաքյալը հասկանում Քրիստոսով փրկությունը և դրան պատրաստվելը: 2021 թվականի տարեկան հարցազրույցում նա բացատրում է, թե ինչ է գործնականում նշանակում դա:

Շրջանային առաքյալների ժողով, Հոգեգալստյան ժամերգություն և նաև վերջերս հրապարակված հարցազրույց - այս թեման իսկապես կարևոր է գլխավոր առաքյալ Ժան-Լյուք Շնայդերի համար. Փրկության ի՞նչ ըմբռնում է մշակում Նոր առաքելական եկեղեցին: Իսկ ի՞նչ հետեւանքներ կարող է ունենալ ժամերգությունների հաճախելը:

Ոչ, խոսքը այն մասին չէ, որ եկեղեցու առաջնորդը վախենում է մասնակիցների քանակից: Գլխավոր Առաքյալը դա պարզաբանեց ոչ միայն իր վերջին քարոզներում, այլ դեռ 2013 թվականին իր պաշտոնը ստանձնելուց կարճ ժամանակ առաջ. «Որպես Քրիստոսի առաքյալներ և դեսպաններ՝ մենք պայքարում ենք ոչ թե Նորառաքելական եկեղեցու գոյատևման համար, այլ՝ Տեր Հիսուս Քրիստոսի համար»: Իսկ այս առումով նա գլխավոր առաջադրանք է համարում հարսնացուների համայնքի նախապատրաստումը Քրիստոսի գալստյանը:

Ոչ թե փախուստ, այլ կատարում

« Հավերժ և կատարյալ ներդաշնակության մեջ ապրել Աստծո հետ » և «անդադար բացահայտել Աստծո փառքի նոր կողմերը», -այսպես է գլխավոր առաքյալը ուրվագծում վերջնական փրկության պատկերացումը, որը և բխում է Նոր Կտակարանում Հիսուս Քրիստոսի խոսքերից:

Այս տեսակետն իր մեջ ներառում է բազմաթիվ ասպեկտներ. «Ազատագրում, փրկություն, պահպանում, ներում, հաղթանակ կամ նույնիսկ ազատություն»,-ասվում է հարցազրույցում: Սակայն, որոշ ասպեկտների չափից ավելի շեշտադրումը ռիսկեր է պարունակում. հավատացյալները կարող են գայթակղվել արտաքին աշխարհից մեկուսանալու գործոնով: Գուցե միսիոներական աշխատանքն այլևս չի մոտիվացվում միայն բացառապես մերձավորի հանդեպ սիրով, այլ հանդիսանում է որպես նպատակին հասնելու միջոց՝ աշխարհից հնարավորինս արագ փախչելու համար:

«Նորառաքելական քրիստոնյաները», - այսպես է ձևակերպում եկեղեցու առաջնորդը փրկության ըմբռնումը, -«պարտադիր չէ, որ իրենց երկրային գոյությունը ընկալեն որպես թշվառության հովիտ, որում նրանք դատապարտված են ապրելու: Այն, ինչը որ նրանք ցանկանում են, դա Աստծո հետ հավերժ ապրելն է: Նրանց կյանքը երկրի վրա ողորմածության ժամանակ է, որը Աստված շնորհում է նրանց, որպեսզի նրանք ուրախության և տխրության մեջ կարողանան պատրաստվել իր հետ հավերժական միասնությանը»:

Միասնություն Աստծո հետ

«Մենք պետք է հավատանք Հիսուս Քրիստոսին, վերստին ծնվենք ջրից և Հոգուց և ստանանք Քրիստոսի մարմինն ու արյունը»: Բայց միայն այս հիմնական պահանջները բավարար չեն. Խոսքն այն մասին է, որ թույլ տան իրենց սրբացվել Աստծու կողմից: Իսկ այս հարցում ժամերգությունների հաճախելը գլխավոր դեր է խաղում:

Որովհետև. «Մասնակցելով ժամերգությանը՝ հավատացյալն ամրապնդում է իր անձնական հարաբերությունները Աստծո հետ»: Բացի այդ՝ «Սուրբ Հոգով ներշնչված քարոզը ամրապնդում է նրա հավատքը Հիսուս Քրիստոսի մոտալուտ գալստյան վերաբերյալ: «Հայր մերը» աղոթելիս նա արտահայտում է Աստծո հետ միասնություն կազմելու իր ցանկությունը: Եվ վերջապես. մեղքերի թողությունը ազատում է նրան իր մեղքերի բեռից: Սուրբ Հաղորդությանը արժանավայել մասնակցությունը ամրացնում է նրա հույսը և սնուցում այն աստվածային կյանքը, որը նա ստացել է վերստին ծնվելուց հետո»:

Միասնություն մարդկանց հետ

Ժամերգությանը մասնակցելը հավատացյալներին պատրաստում է նաև Աստծո արքայությունում այլ մարդկանց հետ միասնության մեջ ապրելուն: Որովհետև համայնքում հավատացյալը համախմբվում է մարդկանց հետ, որոնց ինքը չի ընտրել Աստծո հետ հանդիպման համար: «Աստծո հետ շփվելու և նրա հետ լինելու նրա կարիքն այնքան ուժեղ է, որ նա հայտնվում է այն մարդկանց մոտ, որոնց հետ գուցե երբեք չէր շփվի»:

Ավետարանի զորությունը առանձնահատուկ կերպով դրսևորվում է համայնքում. «Աստված օգտագործում է նույն բառը, որպեսզի զորացնի հավատացյալներին բոլորովին տարբեր իրավիճակներում»: Բացի այդ. « նրանով, որ հավատացյալները միասին և բարձրաձայն աղոթելով ասում են՝ «ներիր մեզ, մեր մեղքերը», հրապարակայնորեն խոստովանում են՝ որ նրանք՝ բոլորն առանց բացառության՝ ողորմածության կարիք ունեն: «Եվ վերջապես, քանի որ ոչ ոք կատարյալ չէ, համայնքային կյանքը հավատացյալներին հնարավորություն է տալիս սովորել միմյանց ներել, հաշտվել և իրենց տարաձայնությունները հաղթահարել »:

«Ես իմ պարտականությունն եմ համարում հանդիսավոր կերպով հիշեցնել Նորառաքելական հավատացյալներին, որ ժամերգությանը մասնակցելը Հիսուսի գալստյանը մեր նախապատրաստության էական մասն է», - ընդգծում է գլխավոր առաքյալ Շնայդերը: «Միայն այս պատճառով ես հրավիրում եմ բոլոր հավատացյալ Նորառաքելական եղբայրներին և քույրերին՝ անձամբ ներկա լինել ժամերգություններին, եթե դա նորից հնարավոր դառնա»:

Նա չի մոռանում նաև նրանց, ովքեր հիվանդության կամ տարիքի պատճառով ստիպված են տանը մնալ. «Դուք կարող եք վստահ լինել Աստծո հոգատարության մեջ: Մենք աղոթում ենք միմյանց համար»:

Տեղեկատու

02.01.2022	Գիֆհորն (Գերմանիա)
09.01.2022	Կալգարի (Կանադա)
16.01.2022	Օստերմունդիգեն (Շվեյցարիա)
21.01.2022	դեռ պետք է ճշտվի (Անգոլա)
22.01.2022	դեռ պետք է ճշտվի (Անգոլա)
23.01.2022	դեռ պետք է ճշտվի (Անգոլա)
06.02.2022	Կոպենհագեն (Դանիա)
24.02.2022	Էբույանգու (Քենիա)
25.02.2022	Մերու (Քենիա)
27.02.2022	Նաիրոբի (Քենիա)
05.03.2022	Պրահա (Չեխիա)
06.03.2022	Լինց (Ավստրիա)
11.03.2022	Կոլոմբո (Շրի Լանկա)
13.03.2022	Կոլոմբո (Շրի Լանկա)
20.03.2022	Զյոլլինգեն (Գերմանիա)
27.03.2022	Գանա (Գանա)

New Apostolic Church
International